ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1957 Общественные науки

Վ. Փեմուբրճյան

ԱՆՏԻՏԱՎՐՈՍՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ ԿԻՄՄԵՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Անտիտավրոսյան երկիրը, ինչպես հայտնի է, Գամիրք է կոչվում՝ այդ երկրամասում կիմմերների հաստատվելու պատճառով։

Միջնադարյան հայ պատմագրության մեջ Գամիրք տեղանվան տակ ճանաչվում էր Կապադովկիան և նրա ժողովուրդը։ Ինչպես հայտնի է, ըստ վաղ միջնադարյան պատմագրության, յուրաքանչյուր տոհմ կամ ցեղ ներկայացվում էր մեկ անձնավորության մեջ, իսկ տեղանունները նույնպես կապվում էին տվյալ վայրերում բնակվող ժողովուրդների անունների հետ, որոնք դարերի ընթացքում պահպանվել են իրենց մոտավոր հնչյունական կոմպլեքսով. օրինակ՝ Գամիր, Գամիրք, Գամիրան, Թեգարամա[1], Թոգարմա, Թորգոմա և այլն։

Այժմ, համաձայն ասորեստանյան արձանագրությունների, ապացուցված է, որ կիմմերների մի մասը նախ Կերչյան Բոսֆորից ներխուժել է Ուրմիո լճի արևելյան շրջանները, ապա որտեղից առաջացել է Ուրարտուի սահմանները։

Գամիրք անվան տակ ընդհանրապես հասկացվել է պատմական Կապադովկիայի ամբողջ երկրամասը, իսկ Կապադովկիայի այն մասը, որտեղ կիմմերները բնակություն էին հաստատել և որը նրանց անունով կոչվում էր Գամիրք, դեռևս մնում էր չճշտված։

Գամիրքը Անտիտավրոսյան երկրի այն մասն է, որը համարյա համապատասխանում է հռոմեական շրջանի Կապադովկիայի տասը կուսակալություններից Կիլիկյան կուսակալությանը, որն ընդգրկում էր իր մեջ այժմյան Սեբաստիայից մինչև Կեսարիա և Հալիս գետից մինչև Մելաս գետի (Թոհմա-սու) միջև ընկած դրեթե ամբողջ երկրամասը։

Միջնադարյան հայ պատմագրության մեջ Կապադովկիայի ամբողջ երկրամասի համար Գամիրք տեղանվան գործածության այդ սխալը կարծում ենք, առաջ է եկել այն հանգամանքից, որ զանազան տիրապետությունների ընթացքում, առանց նկատի առնելու Կապադովկիայի սահմաններում տեղի ունեցած վարչական փոփոխությունները, միշտ գործ է ածվել նույն տեղանունը։ Սակայն հետագայում Գամիրքը սկսել է նկատվել որպես Կապադովկիայի մի գավառը։

Գամիրքի բուն վայրը ճշտելու համար, նախքան Կապադովկիայում հնուց մնացած տեղանունների ստուգաբանությունը, քննության առարկա դարձնենք Սեբաստիայի և Կեսարիայի միջև ընկած երկրամասը, որը պարսիկների կողմից կոչվում էր Կատպատուկա։ *Դա մեծապես կօգնի Գամիրքի սահման-*

---

[1] *L. Delaporte*, «Les Hittites», Paris, *1936*, p. *97*։

ները ճշտելու հարցին։ Կատպատուկան ժողովրդական բարբառում որոշ հապավումներով նախ դարձել է Կատուկ և ապա Կետուկ կամ Կետիկ[1]։

«Կատուկ»-ի կամ «Կետիկ»-ի մասին հիշատակություն կա միջնադարյան այ դրականության մեջ։ Կիրակոս Գանձակեցին, Ղիադետին Սուլթանի և Բաշու Նուի կռիվների մասին խոսելով, հիշատակում է «Կատուկ» կոչվող մի վայր, որաեղ Ղիադետինը վրան էր խփել նախքան Կապադովկիայի Կեսարիա քաղաքը պաշարելը[2]։

Կատուկի կամ Կետիկի մասին հիշատակություն կա նաև Սուլթան Գուլեյմանի պատերազմական ուղեգրության մեջ։ Այսպես, Օսմանյան կայսրության թագավորը 1534 և 1547 թթ. Պարսկաստանի դեմ մղած պատերազմների իր ուղեգրության մեջ երկու անգամ նշում է Կեսարիայի և Սեբաստիայի միջև գտնվող «Կետուկ»-ի կամ «Կետիկ»-ի մասին։ «Կետուկ օվա» (Կետուկի դաշտ), Կետիկ խան[3]։

«Բյուրակն» հանդեսի մեջ Կետիկի մասին նույնպես կարդում ենք հետևյալը. «Կետիկ կանվանվին Կեսարիո և Սեբաստիո միջև Շարգշլայի գայմագամության՝ Գրզրլ-ըրմագի (Հալիս գետ) հարավ ընկնող գյուղերը, ուր կգտնվին հայ գյուղերը՝ Կեմերեկ, Գարագյոլ, Լիսանլը, Թուփաճ, Գայաբունար, Յափալթին։ Գրզրլ-ըրմագի հյուսիս ընկնող և նույն գայմագամության վերաբերյալ մի քանի հայ գյուղեր էլ՝ Զեպնի, Պուրհան, Տենտել, Ալաքիլիսե»[4]։

Թորգոմ Գուշակյանն իր «Ճամբու վերհիշումներ» հոդվածի մեջ Գամիրք անվան տակ մատնանշում է այն վայրը, որին տեղական ժողովուրդն անվանում է «Կետիկ». «Սեբաստիայեն մեկնումիս հաջորդ կեսօրին իսկ [7 նոյեմբերի] կհասնեմ Շեհեր-գշլա (Շար-գշլա), կենտրոնական ավանը Սվազի կենտրոնական սանճագին պատկանող Բոնուս գավառին։ Այս գավառակը, որ կհամապատասխանե հին Կապադովիա Գամիրքի սահմաններուն, կպարունակե իբր 20.000 (քսան հազար) հաշվող հոծ հայություն մը, ցրված 19 գյուղերու մեջ, որոնք են՝ Շեհեր-գշլա (Շար-գշլա), Թուփաճ, Գայաբունար, Յափալթուն, Կեմերեկ, Գարակյոլ, Լիսանլը, Թեքմեն, Տենտիլ, Պուրհան, Զեփնի, Փաշագյուղ, Ղալիմաղարա, Գանթարոզ, Գուրտլու-Գայա, Փաթր, Պահարոզյու, Թեմենճիկ, Ալաքիլիսե»[5]։

Գամիրքը որպես Կապադովկիայի գավառներից մեկը՝ հիշատակված է նաև Հայսմավուրքի մեջ։ «Ս. Սարգիս, Կապադովկիան Կեսարիո Գամիրք գավառիս էր»։

Հ. Վ. Հակոբյանը Գամիրքի մասին անում է հետևյալ խորհրդածությունը. «Կապադովկիա կկոչվեր ի հնումն առ հայս Գամիրք, ուստի է այս անունն.— ենթադրություն մը.— Կեսարիո արևելյան կողմը կա գյուղ մը Կարմիր, Կարմըրակ՝ Թրքերեն՝ Կեռմիր անուն. դեպի հյուսիս արևելք 9 ժամ անդին Գամրակ, Թրքերեն Կեմերեկ գյուղ մը, մեծամասնությամբ հայաբնակ, իսկ Կեմերէկից ոչ

[1] Մեր կարծիքով Կատպատուկա բառը հետևյալ փոփոխություններով դարձել է կատպատուկ, կատուկ, կատուկը «ա»-ի հնչյունափոխությամբ դարձել է «կետուկ», իսկ «ու»-ի հնչյունափոխությամբ «կետիկ»։

[2] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1909, էջ 266։

[3] *Hammer*, Histoire de l'Empire ottoman Paris, 1835, հատ. 5, էջ 94, հատ. 6-րդ, էջ 451։

[4] Բիւրակն, Կ. Պոլիս, 14-րդ հատ., 1900, էջ 660։

[5] Թ. Գուշակյան, Բիւզանդիոն, Կ. Պոլիս, 1914, փետր. 10/23, № 5272։

սակավ հեռի կա հույն գյուղ մը, Գամիրքան, թրք. Կոմյուրկեն անվանյալ, Կարմիր, Կամրակ, Գամիրքան երեքն ի միասին չեն շիներ Կամիրֆ կամ Գամիրֆ»[1]։ Անշուշտ Հակոբյանի ուշադրությունից վրիպել է Կյոմյուրկենից ոչ շատ հեռու Գոմերան, թուրքերեն Կյոմյուրեն, բյուրմենաբնակ գյուղը։

Ենթադրվում է, որ վերոհիշյալ անունները «Գամիրֆ»-ի և «Գոմեր»-ի ածանցված և հետագայում թուրքերենում աղավաղված ձևերը լինեն. օրինակ, «Գամիր» տերմինը պարսկերեն հոգնակի «ան» ածանցով դարձել է «Գամիրքան», ինչպես շահ՝ թագավոր, շահան՝ թագավորներ. իսկ հետագայում սելջուկ թուրքերի, թուրքմենների տիրապետության ժամանակ՝ Գամիրքանը դարձել է Կյոմյուրքեն։ Աստվածաշնչի «Գոմեր» բառը հավանաբար նույնպես «ան» ածանցով դարձել է «Գոմերան», հետագայում թուրքերենում՝ «Կյոմերեն»։

Ինչ վերաբերում է «Կեմերեկ» գյուղաքաղաքի անվան, ենթադրվում է, որ դա ուղղակի հնչյունափոխության միջոցով «Գամիրք» տերմինի տառադարձյալ մի ձևն է։ «Կեմերեկ» տերմինը սովորաբար գրվում է երեք «ե»-ով, մինչդեռ համաձայն հայ լեզվի քերականական կանոնների, անսովոր բան է մեկ բառի մեջ երեք «ե»-ի ներկայությունը։ Ոմանք ենթադրում են, թե Կեմերեկ հայերեն բառ է և նշանակում է Կամարակ[2]. (Կամար և ակ) իբր թե նա իր անունը ստացած լինի մի կամարակերտ հուշարձանից, որի տակից ակեր են բխում։ Սակայն, ըստ Թորոսոմ Գուշակյանի Կեմերեկը՝ Կամարակի հայերենի վերածելու անհաջող փորձ է։ «Կամարակ անունը,— գրում է նա,— զոր երբեմն գործածած են հայերենի ուսուցիչներ, ընդունելություն չէ գտած արդեն»[3]։

Ուշադրության արժանի է մի պարագա ևս, որ Կեմերեկի շրջակա գյուղացիներից՝ պուրհանցիները և տենտիլցիները կեմերեկցիներին կոչում էին զամրիֆցի փոխական կեմերեկցի, իսկ ընդհանրապես հայ գրականության մեջ որպես Կեմերեկի հոմանիշ գործ են ածվել Գամիրք և Գամրակ երկու ձևերն էլ։

Երեմիա դպիր Օշականցին 1765 թ. հունիսի 8 թվակիր նվիրակությունների ցուցակում Կեմերեկը հիշատակում է Գեամրակ ուղղագրությամբ[4]։

Չնայած որ վերոհիշյալ Գամրակ և Գեամրակ ձևերը նոր վկայություններ են, սակայն կարող են նպաստել Գամիրք անվան մեկնությունը։

Պատմական տվյալների և տեղանունների քննությունը ցույց է տալիս, որ կիմմերների մեծ մասը բնակություն է հաստատել Հալիս գետի ծունկից մինչև Մելաս գետը (Թոհմասու), իսկ որոշ մասը տարածվել է նաև մինչև վերին Եփրատի միջև ընկած երկրամասում։ Այս երկրամասը Աստվածաշնչում տեղ է գտել «Գամեր» կամ «Գոմեր» տեղանվան տակ, որը հայ վաղ միջնադարյան գրականության մեջ ծանոթ է Գամիրք կամ Գամրաց աշխարհ անունով։ Մյուս կողմից պետք է նշել, որ այդ երկրամասը յոթերորդ դարի կեսերին (մ. թ. ա.) իր աշխարհագրական դիրքով երեք պետությունների՝ Ասորեստանի, Ուրարտուի և Փռյուգիայի, ապա Լյուդիայի միջև կազմում էր, այսպես կոչված, մի սղատ գոտի, որտեղ միայն կարող էին պարտված կիմմերները հաստատվել, և որը կիմմերների դլխավոր զբաղմունքի՝ անասնապահության և հատկապես ձիաբուծության համար կարող էր հանդիսանալ ամենահարմար վայրը։ Հատկանշա-

---

1 Բիւրակն (հանդես), Կ. Պոլիս, 1899, սեպտ. 29, Զ. 38–39։
2 Բնաշխարհիկ բառարան, 2-րդ հատ., էջ 387։
3 Բիւզանդիոն, Կ. Պոլիս, 1914, փետր. 10–23։
4 Դիվան Հայոց պատմութեան, Դ., Թիֆլիս, 1894, էջ 790–800։

կան է նաև այն, որ Անտիտավրոսյան երկրում հաստատված կիմմերների ցեղապետի Շանտակշեղրու անունը պարզապես նշանակում է «ձիերով հարուստ»։

Կապադովկիան ինչպես այժմ, նույնպես և անցյալում, հատկապես «Նախնադույն Կիլիկիան» բարձրագավառը, այսինքն՝ Գամիրքը, հայտնի էր իր անասնարուծությամբ, մասնավորապես իր ձիարուծությամբ։ «Կապադովկիայի իշխանները,— գրում է Ստրաբոնը,— բացի դրամական մի փոքրիկ տուրքից, յուրաքանչյուր տարի Դարեհին հայթայթում էին 1500 ձի, 2000 ջորի և 50 հազար ոչխար»[1]։ Մեր կարծիքով այդ տուրքի մեծագույն մասը հայթայթում էր հենց Կապադովկիայի Գամիրք գավառը։ Այդ հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք մարգարեի Թորգոմի տան (Թոգ-արմա) ուղղված խոսքերը (երկրամաս, որ նույնպես գտնվում է Անտիտավրոսյան երկրում)։ Մարգարեն, իր խոսքը Տյուրոս քաղաքին ուղղելով ասում է. «Եւ ի տանէ Թորգոմայ ձիովք և հեծելովք և ջորւովք լցին զվաճառս քո» (Եզեկիել Մարգարե ԻԷ, 15)։

Մինչև մեր օրերը Սվազի (Սեբաստիա) կուսակալության չորս գավառներից (սանճագ), հատկապես Սվազի գավառը հարուստ է անասուններով։ Վերջապես այն երկրամասում, որ կիմմերների ցեղերն էին հաստատվել, կան նաև նյութական կուլտուրայի որոշ մնացորդներ։ Այդ տեսակետից հետաքրքրական են Կեմմերեկից 8 կիլոմետր հեռու՝ Կեսարիայի խճուղու մոտ, հենց Կյոմերենի (Գոմերան) և Կյոմյուրքենի (Գամիրքան) հյուսիս արևմտյան կողմը, մի բարձրության վրա կողք-կողքի գտնվող հինգ հողաբլուրները։

Նույնանման 30 հողաբլուրներ («հյուլուկներ») կան Կեսարիայի և Սեբաստիայի միջև, որոնցից տասը գտնվում են Կեմերեկի շրջակայքում։ Դրանցից մեկը գտնվում է Կեմերեկից Շարգշլայի ճանապարհի վրա, հենց դյուղաքաղաքի առաջ «Հյուլուկի» դաշտում և ունի 15—20 մետր բարձրություն. մյուսը՝ Լիսանլու գյուղի մոտ, երկու հատ էլ Ղըզըլճաղշլայի Ղարաբունար կոչված վայրում[2]։ Եթե ճանապարհների եզրերին առանձին հողաբլուրները կարելի է ընդունել որպես դիտաբան, ինչպես Կ. Դարիկյանն է ենթադրում[3], ապա միմյանց կից հինգ հողաբլուրները հավանաբար եղել են դերեզմանատներ»[4], քանի որ իրենց ձևերով ավելի նմանվում են Կիմմերյան Բոսֆորի մեծ կուրգաններին.

Պատմական տվյալները և Անտիտավրոսյան երկրում պահպանված տեղանունները հիմք են տալիս ենթադրելու, որ կիմմերների մեծագույն մասը (մ. թ. ա.) 8-րդ դարի վերջերից մինչև 7-րդ դարի կեսերը ամրողջ Փոքր Ասիան ասպատակելուց հետո բնակվել է Կապադովկիայի Անտիտավրոսի լեռնաշրջանում, որը հետագայում կոչվել է «նախնադույն Կիլիկիա»։ Ժամանակի ընթացքում, թեև կիմմերները ձուլվում են Կապադովկիայի տերիտորիայում ապրող զանազան ցեղերի հետ, այնուամենայնիվ մինչև վաղ միջնադարը հայերի կողմից այդ երկրամասը նրանց անունով կոչվում էր Գամիրք։

---

[1] Strabon, XI, 525։

[2] Կեմերեկի մոտ Ղարաբունարի «Ղըզըլ—ծաղշլա» կոչված վայրի հողաբլուրների արտից հայտնաբերվեցին բնական մեծությամբ, կարմիր կավից թրծված ցուլի երկու արձան։

[3] Կ. Դարիկյան, Եղեռնապատում, Պոստոն, 1924, էջ 125։

[4] Տե՛ս «Բնաշխարհիկ բառարան», էջ 367։